



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 նոյեմբերի 2019թ. N 467-Ա

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԿՈՂԲԱՔԱՐ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով և հաշվի առնելով «Կողբաքար» ՍՊԸ-ի գրությունը, Այրում համայնքի վարչական սահմաններում գտնվող «Կողբաքար» ՍՊԸ-ին հատկացված ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շահագործման հետ կապված խնդրի ուսումնասիրման նպատակով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ եմ

1. Ստեղծել մասնագիտական հանձնաժողով, հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Նազարյան - Մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ /մարզային հողային պետական տեսչության պետ/

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Սուքոյան - Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մ. Մելքումյան - Մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Գ. Թևոսյան - ՍԶ հրամանատարի առաջին տեղակալ-շտաբի պետ

Ք. Բաղդասարյան - Շրջակա միջավայրի նախարարության ընդերքի և հողերի պահպանության և քաղաքականության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայնեցմամբ՝

Ա. Պարանյան - Այրում համայնքի ղեկավար

Ս. Միրիջանյան - Քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորում ունեցող անհատ ձեռներեց

2. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին, ուսումնասիրությունների արդյունքների մասին 15-օրյա ժամկետում ՀՀ Տավուշի մարզպետին ներկայացնել տեղեկատվություն:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՉՈՐԱՆՅԱՆ

27.11.2019

X



27 նոյեմբերի 2019թ.
ք. Իջևան